

3564

3565

3566

3567

3568

3569

Scallop shell

9(47.925)

2-24

2012



759.

ՊԱՏԱՅԻԼ

37905

ԲԱՐՁՐ
Տարածութեան Արքուն
1896.

Дозволено цензурою, 28 октября 1896 года, г. Тифлисъ.

115343-42



37205



Օ. Ա. Ֆայէլ



ՈԱՓԱՅԵԼ



Որս հարիւր տարի սրանից առաջ Խոտալիայի արեելեան մասում գտնվող պատմական Ռուբինո քաղաքում ծնվեց Ռաֆայէլը: Սյդ օրը 1483 թուականի մարտ ամսի 28-ն էր, աւագ ուրբաթ, մի ծանր և խորհրդաւոր օր, որ զիստի այնքան նշանաւոր գառնար Խոտալիայի գեղարուեստական պատմութեան մէջ:

Զիօվաննի Սանթին, Ռաֆայէլի հայրը, այն ժամանակուայ յայտնի նկարիչներից մէկն էր: Նա, սկսելով պարապել նկարչութեամբ այն միջոցներին, երբ նոր նոր ծագում էր վերածնութեան արշալոյսը, իւր սրտում պահում էր մի անկեղծ հաւատ դէպի գեղարուեստի մաքրութիւնը և սրբութիւնը: Սյս հաւատը նա ժառանգաբար ներչնչեց իւր փորբիկ որդուն, որ մինչև տասն ու մէկ տարեկան հասակը ապրում էր նրա տանը և նրա հովանաւորութեան ներքոյ:

Բաւական է մի թեթև հայեցը ձգել Ռաֆայէլի կենսագրութեան վրայ և կարելի է տեսնել, որ հազիւ գեղարուեստների աշխալում գտնվի մի ուրիշ հանճար, որին կեանքը, շրջանը և նրա բոլոր պայմանները այնքան նպաստած լինին,

որքան նպաստել են այդ բոլորը բնութեան երջանիկ զաւակ և աստուածների ընտրեալ Ռաֆայէլին։ Նշանաւոր նկարչի զաւակ, հարուստ, սիրված և փայտայված իւր ծնողներից, ծնված մի երկրում, որ գեղարուեստների պետութիւն է կոչվում—Ռաֆայէլը կեանքի հէնց առաջին քայլերից հանդիպում է ճակատագրի ժամաներին։ Եւ նոյն իսկ մանկական հասակում արտայատվում է անզուզական հանճարի ոյժը։ Իւր հօր կեանքի վերջին տարիներում Ռաֆայէլը ուղեկցում էր նրան դէպի մերձաւոր քաղաքները և մենաստանները։ Սյստեղ Զիօվաննին ընդունում էր պատուէրներ՝ նկարներ պատրաստելու։ Սյստեղ Ռաֆայէլը առիթ էր ունենում ոչ միայն տեսնել գեղարուեստի մեծամեծ գործերը, սրանչանալ նրանցով, այլև ուսումնասիրել շատ բաներ։ Նա անձամբ լսում էր Խտալական ժողովրդի հարուստ գանտաղիայի ծնունդ պատմութիւնները և աւանդութիւնները, որ ներշնչված էին սրանչելի երկնքի, շքեղ բնութեան և ժողովրդի աղատասէր բնաւորութեան ոգով։

Զիօվաննի Սանթին ունէր Ուրբինոյում սեպհական արհեստանոցներ, ուր նա միշտ զբաղված էր նկարչութեամբ և շրջանակներ ոսկեզօծելով Ուրբինոյի եկեղեցիների համար։ Ռաֆայէլը նրանից ժառանգեց ոչ դէպի գեղարուեստը, երկրպագութիւն գեղեցկին, ձգտում դէպի կատարելազործութիւն և դիտելու ու ըմբռնելու ձիրք։ Խոկ լինչ ժառանգեց իւր մօրից, այն ամօթխած և հեղ կնոջից, որի անունն էր Մաջիա և որը մի հասարակ առևտրականի աղջիկ էր։ Հոգեկան պարզութիւն, անխռով սիրտ, հեղ բնաւորութիւն, որոնց դրոշմը երեսում է նրա բոլոր նկարների վրայ։

Ռաֆայէլի վրձնի մանկական փորձերի մասին ճշգրիտ տեսկելութիւններ չի տալիս պատմութիւնը։ Գալով նրա սկզբնական կրթութեանը, աւանդութիւնն ասում է, ի միջի այլոց, թէ նա Ուրբինոյում սովորել է լատիներէն լեզուն նշանաւոր Միքէլ Անջելօի ուսուցիչ Ֆրանչեսկօ Վենդուրինի մօտ, որ լիակատար լատինական քերականութեան առաջին կազմովն է եղել։ Բնական է, որ այս ուսուցիչը պիտի պատմած լինի Ռաֆայէլին գեղարուեստի տիտան Անջելօի մասին, որ այն

ժամանակ տակաւին պատանի էր։ Բնական է, որ նրա պատմածները պիտի ազգած լինին զգայուն աշակերտի վրայ։

Պատմում են, որ Ռաֆայէլի նկարներում փոքրիկ հրեշտակների դէմքերը մեծ մասամբ լիշեցնում են նրա հօր Զիօվաննիի վրձնիը։ Պատմում են նաև, որ Զիօվաննին իւր փոքրիկ հրեշտակները նկարելիս միշտ աչքի առաջ է ունեցել իւր որդու—Ռաֆայէլի դէմքը։ Այսպիսով, ուրեմն, Ռաֆայէլը անգլիտակարար նկարել է ինքն իրան։ Եւ իրաւ, գեղեցիկ էր մանուկ Ռաֆայէլը։ Նրա չափազանց պայծառ աչքերը, դէմքի ուղիղ և նուրբ գծերը, երկայն բաց գոյնի գանգուր մագերը գրաւում էին ընդհանուր ուշադրութիւն։

Ութ տարեկան հասակում Ռաֆայէլը զրկվեց իւր մօրից, իսկ տամնումէկ տարեկան հասակում—հօրից։ Նրա հայրը առաջին կնոջ մահից յետոյ ամուսնացել էր երկրորդ անդամ։ Խորթ մայրը չունէր Ռաֆայէլի հարազատ մօր հրեշտակային արժանաւորութիւնը, հարկաւ, ուրեմն, չէր էլ կարող նրան սիրել այն անկեղծ և անհուն սիրով։ Անկարելի էր, սակայն, Ռաֆայէլին առանց գեկավարի թողնել։ Նրա խնամքականները նրա համար ուսուցիչ ընտրեցին Պիետրո Պերուջինոին, որի դպրոցը գտնվում էր մօտակայ Պերուջի քաղաքում։

Այդ օրից գեղարուեստը դարձաւ Ռաֆայէլի միակ աշխարհը, կեանքի միակ նպատակը, փոխարինելով ծնուզական սէրն ու փայփայանքը։ Մտնելով Պերուջինոի դպրոցը, Ռաֆայէլը շուտով ցոյց տուեց իւր տաղանդը և զրաւեց ամենի ուշագրութիւնը։ Բայց իւր սիրալիր և հեղ բնաւորութեան շնորհով չը զրգուեց իւր ընկերների մէջ ոչ նախանձ և ոչ մի ուրիշ անախորժ զգացում։ Նա բարեսիրտ էր, ընկերասէր, հաճոցով օգնում էր ուրիշներին, թէ կործով և թէ խորհուրդներով։ Եւ ոչ որի մօտ չէր ցոյց տալիս իւր գերազանցութիւնը։ Շատերը, որ նրանից հասակով մեծ և ուսումով բարձր էին, ապագայում դարձան նրա հետեղովները, երբեմն իրանց հետեղութեան մէջ համնելով մինչե ստրկութեան։

Չորս տարի Ռաֆայէլը պարապեց Պերուջինոի մօտ։ Յետոյ որոշեց այցելել իւր ծննդազայրը, կամենալով հաշտու-

թիւն գցել իւր ազգականների մէջ, որ այդ ժամանակ միմեանց հետ թշնամացել էին զանազան ընտանեկան խնդիրների պատճառով։ Հեղ բնաւորութիւնը օգնեց նրան իւր ուղածն անելու, և նա հաշտեցրեց իւր ազգականներին։ Իւր խորթ մօրը նա սեպհական ժառանգութիւնից նշանակեց թօշակ, և այսպիսով յաղթեց նրա ատելութիւնը։

Այդ ժամանակ Ռաֆայէլը 16 տարեկան էր։ Ուրբինօի դուքս Գվիլօբալդօն արդէն լսել էր նրա տաղանդի և յաջողութիւնների մասին։ Սյդ ազնիւ ասպետը գեղարուեստամեր էր. գիտէր գնահատել և հովանաւորել բոլոր տաղանդներին։ Բայց նա այդ միջոցին պատերազմական ձախորդութիւնների հանդիպած, հիւանդ պառկած էր տանը։ Նա չը կարողացաւ օգտիւ Ռաֆայէլի վրձինից, ապա թէ ոչ գուցէ պատանի նկարիչը չը գերադանար Պերուջի։ Սակայն ապազայում Գվիլօբալդօն բաց արաւ իւր պալատի գոները նոր հանճարի համար, և Ռաֆայէլը դարձաւ այդ պալատի ամենաառաջին զարդերից մէկը։

Հետեւալ տարին, այն է 1500 թուականին, Ռաֆայէլը նորից թողեց Պերուջի քաղաքը և իւր ընկերների հետ գնաց Զիթա-դի-Կասթելլա, ուր նա ստացել էր պատուէրներ։ Սյստեղ նա նկարեց մի շարք նկարներ, որոնց մէջ երեսում են իւր հօլ Զիօվաննիի և ուսուցիչ Պերուջինօի աղեցութեան հետեանքները։ Իսկ իւր ինքնուրուցնութիւնը նա առաջին անգամ ցոյց տուեց «Մարդու ստեղծագործվելը» նկարի մէջ։

Իւր ժամանակի ստվարութեան համաձայն՝ Ռաֆայէլը յաճախ թափառում էր քաղաքի շրջականներում, երբեմն զնալով հեռու տեղեր։ ծանապարհին նա նկարում էր պէյզամեներ ու տիպեր, ամեն տեղ իւր զգայուն վրձինի համար առատ նիւթ վանելով։ Սյդպէս, մի անգամ նա մի վանքում, յափշտակվելով հին ճարտարապետութեամբ, նկարեց այնտեղ իւր «Թագաւորների երկրագութիւնը Քրիստոսին» նկարը։ Մի ուրիշ անգամ, պատահաբար ընկնելով մի ամրոց, գրաւեց այնտեղ մի բարձր դիրք ունեցող կնոջ ուշադրութիւնը և ստացաւ նրանից հարուստ պատուէրներ։

Բայց նա, սիրելով իւր ծննդավայրը, ամենից աւելի այդ քաղաքին էր այցելում։ Դուքս Գվիլօբալդօն այդ ժամանակ աւելի բարեյացող հանգամանքների մէջ էր, ուստի կարողացաւ օգտիւ Ռաֆայէլի վրձինից։ Պատանի հանճարը այս անգամ նրա համար նկարեց մի քանի նկարներ, որոնցից մէկը, այն է՝ «Քրիստոսը Հելիոն լերան վրայ», յայտնի է իւր վերին աստիճանի նրբութեամբ։

Ուրբինօի գուքսի պալատում խօսակցութեան սիրված առարկան գեղարուեստն էր։ Զգայուն Ռաֆայէլը հրճուանքով էր լսում գեղարուեստի սիրահար ազգեցիկ մարդկանց պատմածները Ֆլորենցիայի հրաշլիքների, Դօնաթելլօի, Լէօնարդոի և Միքէլ Անջելլօի արձանների մասին։ Եւ այդ պատմութիւնները այնքան գրաւեցին Ռաֆայէլին, որ նա վճռեց անպատճառ այցելել Ֆլորենցիան, հէնց որ միցոց կ'ունենայ։

Տասնուհինգերորդ գարում Ֆլորենցիան գեղարուեստների կենտրոնատեղն էր և ֆլորենտեան զպրոցի ազգեցութիւնը տարածվել էր ամբողջ Իտալիայի վրայ։ Սյդ գպրոցի զլիսաւոր յատկանիշն էր — բնութեան ուսումնասիրութիւնը, առանձնապէս մարդկային մարմնի և հոգու։ Սյն ինչ Ուրբինօի գպրոցը իւր միսթիքական — կրօնական ուղղութեամբ արդէն անկման վրայ էր, չը համապատասխանելով ժամանակի նորագոյն պահանջներին։ Ռաֆայէլը ձգտելով դէպի Ֆլորենցիա, անդիտակցաբար արտայայտում էր իւր տաղանդի անկախութիւնը։ Սյդ ձգտման իմաստը նա իրականացրեց «Ասպետի երազ» նկարի մէջ, որ արտադրեց նրա վրձինը Ֆլորենցիա գնալուց առաջ։ Սյստեղ, իւր վահանի վրայ յենիված, խորին երազի մէջ է միջնադարեան քաջամարտիկը։ Երկու գեղեցիկ կանայք աջ ու ձախ կողմերից առաջարկում են նրան — մէկը թուր կամ գիրը, միւսը — ծաղկիներ։

Ո՞րն ընտրեց ինքը Ռաֆայէլը այս երկուսից — գիտութիւնը և պատերազմի ողին, թէ գեղեցկութիւնը և սէրը։ Ոչ մէկը և ոչ միւսը, այլ երկուսը։ Գեղեցկութեան նուրբ հասկացողութեանը և սիրոյ բուռն զգացմանը նա միաւորեց վրձինի անգեհերութիւնը, եռանդը և իւր հոգու անգուլ հետաքրքրասի-

լութիւնը։ Եւ գրանով նա ցոյց տուեց, թէ որքան նրա հանճարը բարձր է ժամանակի աւանդութիւններից և գեղարուեստի առօրեայ պայմաններից։ Ուաֆայէլը Պերուջինօի աշակերտն է, բայց մի աշակերտ, որ չուտով թօթափեց իւր ուսուցչի լուծը, իւր սրտում պահելով սէր և մտերմութիւն դէպի նա։ Իւր «Աթէնքի դպրոցում» անունով նկարում նա ներկայացրել է իրան Պերուջինօի հետ; կարծես, ցաւելով, որ չի կարող յաւետեան մ'նալ նրա հետ միասին։

Քսան ու մէկ տարեկան էր Ուաֆայէլը, երբ ոտք զրեց Ֆլորենցիա։ Երիտասարդ, գեղեցիկ, գրաւիչ, լի եռանդով, տոգորված աստուածային հրով նա մտաւ այն քաղաքը, ուր եռում էր կեանքը, ուր գեղարուեստը հասել էր զարգացման գագաթնակէտին։ Ֆլորենտացիները ծանօթ չէին նրա տաղանդին, չէին տեսել նրա սքանչելի «Մագոննա Կօնհստաբիլէն», որ այժմ համարվում է նրա ամենալաւ գործերից մինը և նկարված է գեղարուեստների մայրաքաղաքը գնալուց մի քիչ առաջ։

Բայց Ուաֆայէլը սկսում է եռանդով գործել և շուտով զարգացնում իւր տաղանդը։ Նրա առաջին գործն է լինում del granduca կոչված Մագոննան, ուր նկարիչը անսովոր ուժով պատկերացնում է մայրական ամօթխած և գեղալի սիրոյ իովէալը։ Զորս տարի (1504—1508 թ. թ.) ապրելով Ֆլորենցիայում, Ուաֆայէլը չէր մոռանում և իւր սիրելի ծննդավայրը — Ուրբինօն։ Նա երեմն գալիս էր այդտեղ և գալիս էր այժմ բոլորովին այլ դիրքում։ Նրա վրձինի պատուղները արդէն Ֆլորենցիայում հոչակել էին նրա անունը, և այդ հոչակը տարածվել էր ամբողջ Իտալիայում։ Հարկաւ, այժմ Ուրբինօի դուքսի պալատի դռները աւելի լայն պիտի բացվէին նրա առջե։ Այստեղ Ուաֆայէլը ծանօթացաւ մի շարք նշանաւոր մարդկանց հետ, որոնց թւում և բանաստեղծ Պիետրօ Բեմբօի հետ, որ ապագայում դարձաւ Լեոն Խ-դ պապի քարտուղարը։ Բեմբօն յայտնի էր իւր ընդարձակ կրթութեամբ և բազմակողմանի զարգացումով։ Նա հասկանում էր և ուսումնասիրել էր բնութեան գեղեցկութիւնը։ Նրա ախորժելի զրոյցները չէին կարող չաղգել Ուաֆայէլի փափուկ պատի և ըմբռնող հոգու վրայ։

Անդադար շփմելով Ուրբինօի առաջնակարգ տաղանդների հետ, վայելելով գեղարուեստանէր դուքսի հովանաւորութիւնը, Ուաֆայէլը օր օրի վրայ զարգացնում էր իւր անգուգական ձիբրը։ Նա սովորում էր անդուկ և գործում էր անընդհատ։ Մի անգամ նա երկու ամսուայ ընթացքում նկարեց «Սուրբ Գէորգ» անունով նկարը, որ դուքսը ուղարկեց իրեկ նուէր անգլիական թագաւորին։ Այս նկարը այժմ զարդարում է Պետերբուրգի հոչակաւոր երմիտաժը և դրված է Ուաֆայէլի մի ուլիշ հրաշալիքի, «Մագոննա Կօնհստաբիլէ» նկարի հետ։ Յայտնի գեղարուեստագէտների ասելով, «Սուրբ Գէորգ» նկարի մէջ արտայայտվել է Ուաֆայէլի այդ ժամանակուայ ստեղծագործական տաղանդի բոլոր ոյժը, և նա բարձր է նկարվ միւս բոլոր փոքրիկ նկարներից։

Նոյն դուքս Գիլդօբալդօի պալատում Ուաֆայէլը նկարեց և «Երեք զրացիա» փոքրիկ, բայց նշանաւոր նկարը և իւր բարեկամ դուքսի պատկերը, որ գժրազդաբար կորել է։ Նոյն միջոցներին նա իւր հօրեղբօր համար նկարեց իւր սեպհական պատկերը, որ այժմ համարվում է նոյնպէս գեղարուեստի հրաշալիք։

Նորից վերադառնալով Ֆլորենցիա, Ուաֆայէլը կրկնակի ուժերով շարունակում է ուսումնասիրել գեղարուեստը։ Ի միջի այլոց, նա այցելում է Բաչչիօ դ'Սնիօլո գեղարուեստագէտի երեկոյթները, և այստեղ սիրալիք տանտիրոջ շնորհով, ծանօթանում է նաև ճարտարապետութեան հետ։ Այդ երեկոյթներին երբեմն ներկայ է լինում և Միքէլ Անդելլօն, որի ընդական լինելը, զարգացումը, բանաստեղծական ձիբը, բազմակողմանի տեղեկութիւնները հին գեղարուեստների մասին, ուժեղ բնաւորութիւնը և անուան հոչակը մի առանձին գեղեցիկութիւն և իմաստ էին տալիս երեկոյթներին։ Շատ բան է Ուաֆայէլը սովորում նրանից, ինչպէս և ուրիշներից, բայց և միշտ մ'նում է հաւատարիմ իւր սկզբունքին—իւրացնել ամենուրեք լաւը, բայց երբէք չենթարկվել կուրօրէն ուրիշների ազգեցութեան։

Այդ ժամանակները Ուաֆայէլը նկարում էր անընդհատ, և

Նրա վրձինը մեծ մասամբ արտադրում էր մագոննաներ, որոնց թիւը այնքան շատ է, որ այժմ գրեթէ ամեն մի փոքր ի շատէ նշանաւոր մուգէում կարելի է գտնել մի օրինակ: Սակայն նա իւր իդէալին հասնում է այսպէս կոչված «Մադոննա Տեմպիի» մէջ, ուր Մարիամ Աստուծածինը անդորր ուրախութեամբ սեղմում է մանկանը իւր կրծքին, պատրաստվելով համբուրել նրան: Մադոննաների մի ամբողջ շարք ներկայումս կարելի է տեսնել նաև Պետերբուրգի Երմիտաժում:

Ուաֆայէլի մադոննաների չնորհով էր, որ այն ժամանակուայ Խտալիան դարձաւ գեղեցկութեան հայրենիք, որովհետև ոչ ոք մինչև այդ ժամանակ և ոչ յետոյ չի գերազանցել նրան մադոննաներ նկարելում և ոչ նոյն իսկ Լէօնարդո դա-Վինչին, որը սակայն քիչ ազգեցութիւն չի ունեցել Ուաֆայէլի վրայ: Սյդ գեռ Ֆլորենցիա գտնված ժամանակ, իսկ Հռովմում նա երեան է գալիս ուրիշ դիրքում և յետոյ շատ անգամ է նկարում սուրբ կոյսի պատկերը:

Նշանաւոր է Ուաֆայէլի այդ ժամանակամիջոցի նկարների մէջ «Քրիստոսի թաղումը» նկարը, որ պատուիրել էր նրան Կոմունի Աթալանթէ Բագլիօնէն: Սյս նկարի մէջ արտայայտվել են նկարչի բոլոր երիտասարդական եռանդը, հնարագիտութիւնը և ձեռք բերած դիտութիւնները:

Ուաֆայէլի ծննդավայր Ուրբինօն արգէն վագուց կարող էր պարծենալ իւր զաւակով, իսկ այդ միջոցին նա հազիւ 22 տարեկան էր:

Չորս տարի Ֆլորենցիայում մնալուց յետոյ Ուաֆայէլը, վերջապէս, 1508 թուականին, Յուլիոս II-րդ պապի հրաւերով, գնում է Հռովմ:

Սյդ ժամանակուայ Հռովմը, այդ սարտ տուն (աշխարհի գլուխ) կոչված մայրաքարը գրեթէ բարոյական անկման մէջ էր: Վատիկանի գահակալների անդուսպ շուայտութիւնները և զրամամութիւնը նսեմացրել էին պատական գահի հրապոյրը, մանաւանդ նահատակված Սափոնարօլլայի ջերմ քարոզներից յետոյ: Բայց ինչ և է, այդ հրապոյրը տակաւին կար, և դա ժաղսվրդի միամիտ հաւատն ու ջերմ դգացումն էին:

Ահա այդ հաւատն ու զգացումը իրանց վերջին լուսով ողողեցին XVII դարու վերածնութեան պարագութիւն Ուաֆայէլի վրձինի գործերը: Յուլիոս II պապը, հրաւերելով նկարչին Հռովմ, անգիտակցաբար աւելի ամրացրեց իւր անմահութիւնը: Նա, որ մի կողմից կռվում էր արտաքին և ներքին թշնամիների հետ, միւս կողմից չը մոռացաւ բարձրացնել կաթոլիկ եկեղեցու շուքը: Նա գիտէր, որ բարձրացնելով եկեղեցու փառքը, պիտի բարձրացնէ և Հռովմի դիրքը: Նա ոչինչ չըխնայեց Վատիկանի համար: Նա հրաւերեց այդտեղ Միքէլ Անջելոին, Սան-Ֆալլոին, Գել-Պիօմբօին, Ուաֆայէլին և ուրիշ շատ հոչակաւոր վարպետների, որոնք մինչև եթերը բարձրացրին Հռովմի փառքի տապալվող դրօշը:

Հռովմում և այն էլ Յուլիոս II-դի պալատում պիտի երիտասարդ հանճարը տարածէր իւր գօրաւոր թերքը: Սյստեղ նա հանդիպեց իւր հաւատարակից հանճար Միքէլ Անջելոին և երկար ժամանակ գործեց նրա հետ մի և նոյն փառահեղ յարկի տակ: Սակայն հանճարներն էլ գերծ չեն մարդկային թուլութիւններից: Փոխադարձ նախանձը չէր միայն, որ միշտ անջատ պահեց Ուաֆայէլին և Միքէլ Անջելոին, այլ և նրանց իրարու միանգամայն հակառակ բնաւորութիւնները: Ուաֆայէլը երիտասարդ էր, առողջ, գեղեցիկ, թարմ ուժերով լի, հեղ և անխոռվ: Միքէլ Անջելոն հիւանդոտ էր, կեանքի փորձանքներից վշտահար, յուզգող և գրգռվող: Ահա ինչ են պատմում այդ կրկու հանճարների մասին: Մի անգամ Ուաֆայէլը, իւր աշակերտներով շրջապատված, անցնում էր Վատիկանի շքեղ գահ-վիճներով: Դէմ ու դէմ գալիս էր Միքէլ Անջելոն մենակ և աշք-ունքը կիտած: «Ուաֆայէլը իւր թիկնապահների հետ լնթանում է ինչպէս մի ժեներալ», նկատում է Միքէլ Անջելոն: «Իսկ գուք ինչպէս մի գահիծ», պատասխանում է Ուաֆայէլը:

Բայց ոչ, Միքէլ Անջելոն դահիճ չէր, այլ մարմնացած վրդովմունք և բողոք:

Եւ չընայելով փոխադարձ հակալրութեանը, երկու հանճարներն էլ գիտէին գնահատել միմեանց արժանաւորութիւնները, երկուսն էլ հիանում էին միմեանց գործերով:

Յուլիս II-դը Ուաֆայէլին պատուիրեց նկարներով զարդարել Վատիկանի Դելլա Սինիատուրա կոշված դահլիճ պատերը, որի առաստաղն արդէն զարդարված էր մի ուրիշ նկարչի ձեռքով: Բայց երբ նա տեսաւ Ուաֆայէլի առաջին գործը, անմիջապէս հրամայեց առաստաղն էլ ջնջել և նորից նկարել:

Այդ ըստէից ահա սկսվեց Ուաֆայէլի թագաւորութիւնը: Յուլիսը սքանչացաւ նրա գործերով, և այս հանգամները միայն բաւական էր, որպէս զի երիտասարդ հանճարի թոփչիքի համար բացվէր անսահման ասպարէզ: Վատիկանի ահապին դահլիճները դարձան Ուաֆայէլի տաճարը: Այստեղ նա խտալական նկարչութեան մէջ ձգեց մի ամբողջ յեղափոխութիւն, որ յայտնի է վերածնութիւն անունով: Այստեղ ամեն մի անկիւն դարձաւ նրա վրձինի տակ յաւիտենական գեղեցկութեան ապօթէօղ:

Ուաֆայէլի Վատիկանում և առհասարակ Հռովմում գործած նկարների մէջ իշխող իդէան—եկեղեցու զօրութիւնն է: Այդ զօրութեանն են ենթարկված աշխարհի վրայ բոլոր ուժերը—այս էր նկարչի նշանաբանը, և այս գաղափարը մի առանձին ուժով արտայայտեց Իլիոդորի դահլիճում: Բայց Ուաֆայէլը չը կարողացաւ շատ էլ անկախ մնալ և, ենթարկելով ժամանակակից պապերի հրապոյրին, իւր հրաշալիքների մէջ մտցրեց տեղ տեղ կեղծիք: Պատմական սիւժէների հետ նա խառնեց նորագոյն դէմքեր, և այդ նախ Յուլիս II-դի, ապա Լեոն X-դի դէմքերն էին: Նա ձգտում էր բարձրացնել այդ երկու լուսաւոր և նշանաւոր պատերի փառքը, որոնք սակայն արժանի էին այդ բանին:

Ուաֆայէլը գրաւեց ամենին, դարձաւ համայն Խոտալիայի հրճուանքի և երկրպագութեան առարկան: Առանձնապէս նա վայելում էր իւր բազմաթիւ աշակերտների սէրն ու յարգանքը: Նրանք այնքան յափշտակված էին նրա վրձինով և նրա հրեշտակային բնաւորութեամբ, որ ուղեկցում էին նրան խմբովին ամեն տեղ, ինչպէս տասներկու առաքեալները Քրիստոսին: Եւ ոչ միայն նրանք, այլև կողմնակի մարդիկ, երբ Ուաֆայէլը անցնում էր փողոցով, գնում էին նրա ետևից կամ կանգ էին

առնում և նայում նրան, այնքան գեղեցիկ էր նա և այնքան մեծ էր արդէն նրա հոչակը: Բայց նա համեստ էր և երբէք չը դաւաճանեց իւր հոգու բնական հեղութեանը: Եւ ինչ կարիք կար դաւաճանելու, քանի որ ամենքը խոնարհվում էին նրա առջե:

Նրան սիրում էր և պատվում Յուլիս II-դը, բայց աւելի սիրեց և պատուեց նրա յաջորդ Լեոն X-դը: Սակայն աժան չէր նստում Ուաֆայէլին Լեոնի այդ սէրը, որովհետեւ որքան ևս լուսաւոր պապը շուայրում էր իւր բարիքները նկարչին, նոյնքան և խստապահանջ էր: Նա անդադար ստիպում էր Ուաֆայէլին գործել ու գործել: Իսկ Ուաֆայէլը յոգնել չը գիտէր:

Այժմ Ուաֆայէլը այնքան ապահով էր նիւթապէս, որ կարողացաւ Վատիկանի մօտ, սուրբ Պետրոս եկեղեցու դէմ ու դէմ, սեպհական տուն շինել: Նա այդ տունը զարդարեց իւր վրձինի անթիւ հրաշալիքներով:

Շատ հարուստ և նշանաւոր ընտանիքներ կամեցան Ուաֆայէլին փեսայ ունենալ, բայց ամենին էլ մերժեց: Աւանդութիւնն ասում է, որ նա իւր ամբողջ կեանքում սիրել է Ֆօրնարինային, որ մի հասարակ հացավաճառ օրիորդ է եղել: Մինչև այսօր էլ ցոյց են տալիս այն աղքատիկ բնակարանը, ուր ծնվել է այդ աղջիկը և ապրել: Ասում են նա շատ գեղեցիկ է եղել: Կայ մինչև անգամ մի նկար, որ վերագրում են Սեբաստիան Դել-Պիոմբօին և որ պատկերացնում է Ուաֆայէլին իւր սիրուճու հետ: Նոյն իսկ Ուաֆայէլի երկու կանացի պատկերների մէջ գտնում են նմանութիւն Ֆօրնարինայի հետ:

Մի կողմից փայփայված Լեոն X-դից, միւս կողմից սիրված իւր սիրելի Ֆօրնարինայից, Ուաֆայէլը շարունակում էր գործել անդադար, և պահնչելի նկարները հետեւում էին միմեանց: Նա նկարում էր այնքան, որ նրա գործերի հասարակ ցուցակն անգամ այժմ ներկայացնում է մի հատոր: Բայց դրանից, ամեն առաւտ պապը նրան կանչում էր իւր մօտ խորհրդակցելու Սուրբ Պետրոսի եկեղեցու շինութեան գործերի մասին: Ուաֆայէլը հիացմունքով էր վերաբերվում այդ կլասիքական շինութեան գաղափարին և բաղդաւոր էր համարում

իրան, որ պատի ցանկութեամբ ճարտարապետ Բյամանդէի մահից յետոյ նշանակվել էր այդ վիթխարի ստեղծագործութեան զեկավար։ Պէտք է ասել, որ բացի հանճարեղ նկարիչ լինելուց, նա էր նաև տաղանդաւոր ճարտարապետ։

Այդ ժամանակները Ռաֆայէլը, ի միջի այլոց, նկարեց և կենս Հ-դի պատկերը։ Պատմում են, որ այս նկարը այնքան նման է եղել իւր օրիժինավին, որ մի անգամ պատի կանցլեր Բալթազար Թուրինին չոքել է նրա առջև, կարծելով, թէ ինքը պապն է և առաջարկել է նրան գրիչ ու թանաք մի ինչ որ կոնդակ ստորագրելու։

Ուղիղ երեսունուեկիթ տարեկան էր Ռաֆայէլը, երբ անժամանակ մահը խլեց նրան աշխարհից։ Այդ նրա ծննդեան օրն էր 1520 թուականին։ Կարելի է երևակայել, թէ որքան մեծ էր թէ պատի եւ թէ ամբողջ իտալական ժողովրդի վիշտը այս անփոխարինելի կորստի մասին։ Ռաֆայէլի ազնիւ բնաւորութիւնը արտայայտվեց եւ մահուան ժամանակ։ Հաղորդութիւն ընդունելուց առաջ նա գրեց մի կտակ, ուր չը մուտացաւ ոչ իւր ազգականներին և ոչ բարեկամներին։ Ամենից առաջ նա ապահովեց իւր երգանիկ կեանքի ընկերուհի Ֆօրնարինային, յետոյ հոգաց իւր սիրած աշակերտների մասին։ Իւր տունը նա նուիրեց կարգինալ Բիբինային, իսկ շարժական կայքը աղականներին։

Նրա դիակը դրված էր իւր տան դահլիճում։ Նրա զլսի կողմում տեղաւորել էին «Վերափոխումն» խորագրով չաւարտած նկարը։ Ամբողջ Հռովմը գալիս էր վերջին յարգանքը մատուցանելու իւր սիրեցեալ նկարչին։ Ամենքը ողբում էին վաղահաս մահը։ Բահաստեղծները նուիրում էին նրան սօնեւուներ, երգիչները երգում էին ողբական երգեր։

Դեռ կենդանութեան ժամանակ Ռաֆայէլը ընտրել էր իւր գերեզմանի համար տեղ Դելա-Ռուոնդա անունով եկեղեցում, որ հին ժամանակները Ս.գրիփլայի պանթէօնն էր։

Չաւարտած «Վերափոխումը» և «Սիրողինայի մակօննա»— այդ ամենասբանչելի մագոննան, Ռաֆայէլի վերջին նկարներն են։ Մագօննայից սկսելով, նա մագօննայով աւարտեց իւր կեանքը։

Կարլո Մարատոին ահա ինչպէս է արտայայտում իւր հրճուանքը Ռաֆայէլի նկարների առջե։ «Եթէ ինձ ցոյց տալին Ռաֆայէլի նկարը և ես ոչինչ լսած չըլինէի նրա մասին, եթէ ինձ ասէին, թէ դա հրեշտակի ձեռագործ է, ես կը հաւատայի»։

Գեօթէն ասում է. «Ռաֆայէլը միշտ ստեղծագործում էր այն, ինչ որ ուղիները ցնորով էին միայն ստեղծագործում»։ Եւ այդ աւելի քան ճիշտ է։ Ռաֆայէլի նկարները մի մի ցնորըներ են, որ գուցէ այլև շլպիտի կրկնվեն աշխարհում։

Իտալիան եւ նրա հետ ամբողջ Եւրոպան 1883 թուականի մարտի 28-ին տօնեց Ռաֆայէլի չորսիարիւրամեակը։ Ամենից շրեղ կերպով այդ տօնը կատարվեց, հարկաւ, Հռովմում։ Ամբողջ ազգն էր մասնակցում այդ տօնին, սկսած յետին խրճիթի բնակիչներից մինչև կայսերական և պապական պալատների մեծամեծները։ Բաւական է ասել, որ Կապլատոլիայից դէպի նկարչի գերեզմանը դիմու հանդիսաւոր զնացրին դրոշակակիրներ էին մինիստրները և գեսպանները։ Ոչ պակաս շրեղ էր և այն տօնը, որ կատարվեց Տրաստեվերէում, ուր ինչպէս ասում են, ապրել է Ֆօրնարինան։ Այն աղքատիկ տունը, ուր բնակիլ է այդ գեղեցկուհին, գարդարված է եղել ծաղիկներով և լուսաւորված բենգալեան կրակներով։ Խոկ Ռաֆայէլի շիրիմը այդ օրը թաղվել է մանիշակների տակ։

Ռաֆայէլի մահով Իտալիայի գեղարվեստական շուքը շուտով ընկաւ։ Սակայն դարեր անցան, և համայն աշխարհը նորից իւր հայեացը դարձեց դէպի գեղարուեստների կենտրոնավայրը։ Եւ այսուղ նա նորից խոնարհվեց և յաւիտեան պիտի խոնարհվէ նկարչութեան թագաւորի—Ռաֆայէլի առջև։



3564
3565
3566
3567
3568
3569

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0495417

ՀՀ Ազգային գրադարան



NL0495412

ՀՀ Ազգային գրադարան



NL0495410

ՀՀ Ազգային գրադարան



NL0495408

ՀՀ Ազգային գրադարան



NL0495407

ՀՀ Ազգային գրադարան



NL0495406

